

Մենք հաճախ ենք մասնակցում տարբեր կոնկուրսների ու մրցույթների: Օրինակ, այդ մրցույթներից մեկը փոփոխական ծրագիրն է, որին մասնակցել է 120 երեխա, այդ թվում՝ հաղթել է 20-ը: Նրանցից մեկը մեր դպրոցի աշակերտ Մովսես Ավանջյանն է, այժմ Բաթումիի թիվ 30 դպրոցի (Գոնիոյի) սովորող: Նա սեպտեմբերի 15-ից գնացել է մեկ կիսամյակ է՝ ուսումը շարունակում է այնտեղ:

Մենք հաճախ ենք զանգահարում, հետաքրքրվում, թե ինչպես են նրա գործերը նոր դպրոցում: Այդ ընթացքում մեզ շատ հետաքրքրեց նրանց դպրոցը եւ որոշեցինք ընկերական հանդիպում կազմակերպել Գոնիոյի դպրոցի աշակերտների հետ:

Ուսուցչուհի Կլարան զանգահարեց Գոնիոյի դպրոցի տնօրեն Ցիսանա Միքելաձեին միասնական ծրագիր՝ մարզական ուրախ խաղերի մրցույթ կազմակերպելու նպատակով: Տիկին Ցիսանան սիրով համաձայնեց այդ առաջարկին, որից հետո, հարգելի Կլարան օգնության խնդրանքով դիմեց Նինոծմինդայի սակրեբուլոյի նախագահ Սիմոն Փնջոյանին եւ մեր շրջանային մշակույթի ու սպորտի ծառայության ղեկավար Գիորգի Ջմոյանին: Շրջանում մեր հաջողությունների մասին լավ գիտեն, ուստի այս անգամ էլ նրանք ընդառաջեցին մեզ՝ հոգալով մեր ճանապարհածախսը:

Եվ ահա, նոյեմբերի 19-ին ուղեւորվեցինք Բաթումի: Հրաշալի տրամադրություններով հասանք եւ իջեւանեցինք յուրաքանչյուրս մեր սենյակներում: Առաջին օրը զբոսնեցինք, դիտեցինք քաղաքը եւ ակվարիումները: Երկրորդ օրը, առավոտյան, այցելեցինք Գոնիոյի դպրոց, որտեղ հանդիպեցինք երեխաների հետ, ծանոթացանք միմյանց հետ եւ սպորտդահլիճում սկսեցինք մրցույթը: Վերջացնելով այն՝ հրաժեշտ տվեցինք մեր ընկերներին եւ մեկնեցինք ծովափ: Մեր բախտից այդ օրը շատ արեւոտ էր եւ կարողացանք օգտվել Սեւ ծովի բարիքներից: Ծովափին գեղեցիկ ու հաճելի ժամանակ անցկացրինք, նկարվեցինք եւ լիցքաթափվեցինք: Երեկոյան նորից վերադարձանք քաղաք, դիտեցինք գիշերային Բաթումին եւ զբոսնեցինք:

Երրորդ օրը նորից հրավիրված էինք դպրոց: Դպրոցում մեզ համար կազմակերպել էին մեծ ու գեղեցիկ միջոցառում, ուր, բացի իրենց համարներից, տեղ գտան նաեւ մեր դպրոցի աշակերտների երգերի ու պարային մի քանի համարներ: Նորից նկարվեցինք եւ, հրաժեշտ տալով դպրոցին ու մեր նոր ընկերներին, դուրս եկանք Բաթումիից: Վատն այն էր, որ, երեք օր մնալով հանդերձ, չկարողացանք լինել դելֆինարիայում:

Մենք Գոնիոյի աշակերտներին փոխադարձ այցով զարնանը հրավիրեցինք մեզ մոտ, որպեսզի մեր ընկերությունը երկար շարունակվի:

Գյուղ վերադարձի ճանապարհին՝ Քութայիսիում մտանք 80մ խորության վրա գտնվող Պրոմեթեւսի քարանձավը: Ապա եւ հրաշալի տպավորություններով վերադարձանք գյուղ բոլորս՝ 16 աշակերտ, 4 ուսուցիչ ու մեկ վարորդ:

Մենք մեր շնորհակալությունն ենք հայտնում պարոն Ս.Փնջոյանին, սպորտի ղեկավար

Գ.Զմոյանին, որ մեզ աջակցեցին եւ մեր վարորդ Միսակին, որ անփորձանք տուն հասցրեց:
Անշուշտ, շնորհակալ ենք նաեւ մեր դպրոցի տնօրեն Ս.Մադոյանին ու վրաց լեզվի
ուսուցչուհի Կ.Փոցխվերաշվիլուն, ովքեր մեզ՝ աշակերտներին համար անում են ամեն
հնարավորը՝ մեր ժամանակը հաճելի ու բովանդակալից անցկացնելու համար:

ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕ

ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕ **XI** ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ